

Հաւատացեալք գիտուն եւ բարեկիրթ Տէր-
տէրներուն խոստովանին. եւ որովհետեւ Ղա-
լաթիոյ Տէրտէրները տգէտ եւ անկիրթ էին՝
ամենքը ասոնցմէ հեռացան: Ասոր վրայ Տէր-
տէրներ տան մը մէջ գաղտնի ժողով գումա-
րեցին, Սարգսի դէմ ամբաստանագիր մը ստո-
րագրեցին եւ ղրկեցին Պատրիարքին: Տէրտէր-
ները կը խնդրէին՝ որ Սարգիսն անկէ հեռա-
ցընէ, որպէս զի ժողովուրդն իրենցմէ չպաղի եւ
իրենք ալ հանգարտին. վասն զի Սարգսին միտքն
է, կ'ըսէին, որ ժողովուրդը իրենցմէ հեռանայ
եւ երթայ կաթողիկ քահանաներուն խոստո-
վանի: Կոյն տնէն ուր ժողովք կազմած էին, կին
մը փութաց Սարգսին իմացուց: Սարգիս չհաւա-
տալով՝ ժամադարին գնաց, եւ հարցովիորձով
իմանալով իրականութիւնը, իսկոյն կանչեց
Աւագ Տէր Թօհանը, որ նոյն հաստատեց: Երե-
կոյեան ժամերգութենէն ետեւ՝ իշխանք եւ ժո-
ղովուրդը եկեղեցւոյ սրահն ելան, որոնցմէ զո-
մանս Սարգիս մէկդի առաւ, եղածը պատմեց
եւ ստուգած ըլլալն իմացուց: Ասոնք զայրա-
ցան երիցանց դէմ, եւ պահանջեցին որ պան-
դուխտ երէցները եկեղեցիէն հեռացուն: Բայց
Սարգիս զիրենք հանդարտեցուց, երիցունք եկան
Սարգսէն թողութիւն խնդրեցին, զոր եւ Պա-
տրիարքը լսելով՝ զՍարգիս մխիթարեց եւ երի-
ցունքը սաստեց:

Յարութիւն Արքեպ. Բասենցի 1763ին
կաթողիկոսի կողմանէ Կ. Պոլիս նուիրակ ղրկուած
էր, եւ այլեւայլ եկեղեցիներ պտըտելէն ետեւ,